

## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի գնահատման չափանիշներ

### X դասարան

1. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 2մ., 3,4-րդ ենթահարցեր՝ 0,5մ.:
2. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 2մ., 3-րդ ենթահարց՝ 2մ. :
3. Հարց- 1-ին ենթահարց՝ 0,5մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 0,5մ.  
4-րդ ենթահարց՝ 2մ.:
4. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 2մ., 3-րդ ենթահարց՝ 1մ. :
5. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2,3,5,6-րդ ենթահարցերը՝ 0,5մ., 4-րդ՝ 1մ. :

Յ.Գ. Կարևորել հարուստ բառապաշարը, յուրօրինակ վերլուծությունները, ուշադրություն դարձնել ոճական սխալներին՝ յուրաքանչյուրի համար հանելով 0,25մ.: Ուղղագրական սխալներին անդրադառնալ՝ խմբավորելով:

## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի պատասխաններ

### X դասարան

1.Քրիստոնեությունը Հայաստան մտավ ոչ միայն որպես պետական, այլև ազգային կրոն և հաստատվելու համար գրեթե վերացրեց և՛ հեթանոսական, և՛ մեհենական մատյաններն ու ծեսերը: Ամբողջ մեկ դար Հայաստանը տարուբերվում էր օտար՝ հունարենով և ասորերենով քարոզչության հորձանուտում: Պիտի ծնվեր մեկը, որ կարողանար փրկել իր ժողովրդին ուճացումից: Եվ այդ մեկը եղավ մի ամբողջ ժողովրդի առաջին ուսուցիչը՝ Տարոնի Հացեկաց գյուղի երանելի Վարդանի որդին՝ Մեսրոպ Մաշտոցը, որը երկնեց «երկաթագիր» գրերը և՛

Ճնվեց, որ ծնվենք, եղավ, որ լինենք Եվ անմահացավ, որ անմահանանք:

Հետագա բոլոր պատմիչները, փիլիսոփաները, բանաստեղծները «հղկել են այն դարեր՝ որպես մարմար»: Մաշտոցին ու նրա գյուտը առաջինը փառաբանել է նրա կրոսեր աշակերտը՝ Կորյուն Երանելին («ՎարքՄաշտոցի») այնուհետև՝ միջնադարյան մի շարք մատենագիրներ, իսկ նոր ժամանակներում նրա մասին ստեղծվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, վեպեր, վիպակներ, պոեմներ ու բանաստեղծություններ:

Նշանակալից են Դերենիկ Դեմիրճյանի ՄեսրոպՄաշտոց»անավարտ վեպը, Պարույր Սևակի«Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը, Սիամանթոյի«Սուրբ Մեսրոպ» պոեմը, Պատվական Խաչատրյանի«Ասք Մաշտոցի մասին», Վանիկ Սանթրոյանի« Մաշտոցի որդիները», Գևորգ Էմինի, Սիլվա Կապուտիկյանի,Յովհաննես Շիրազի այլոց բազմաթիվ բանաստեղծություններ:

Մաշտոցին բնութագրող շրջասույթներից են՝Մեր դպրության Արարատ լեռը(Գևորգ Էմին), Օշականի սուրբ ննջեցյալ, հայերենի առաջին ուսուցիչ, հայ գրերի ստեղծող, գրչության ստեղծող, ուսուցչապետ:

2.V դարի պատմիչ Եղիշեն հայտնի է «Վասն Վարդանայ և Յայոց պատերազմին» մատյանով:Պատմիչը այն գրել է Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով: Այն պատմագիտական երկ է, բայց Եղիշեն նրան գեղարվեստական և հուզական մեծ լիցք է հաղորդել՝ գրելով հյուրերը, գրավիչ լեզվով: Մատյանի հիման վրա 19-20-րդ դարերում ստեղծվել են բազմաթիվ նշանավոր երկեր: Այս երկը որպես սկզբնաղբյուր են օգտագործել Ղևոնդ Ալիշանը, Ռափայել Պատկանյանը, Յովհաննես Յովհաննիսյանը, Նաիրի Չարյանը, Դերենիկ Դեմիրճյանը և այլք:Ուշագրավ են Դերենիկ Դեմիրճյանի «Վասակ» դրաման և«Վարդանանք» պատմավեպը:

Եղիշեն իր երկը համարել է «սիրելիների համար մխիթարություն, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն»:

Եղիշեին անվանել են «Պլպուլն Ավարայրի», Ավարայրի երգիչ, Եղիշե Ոսկեբերան:

Ասույթներ՝ Լավ է աչքով կույր, քան մտքով:

Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսում լինելուց:

Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը զրկվում է կատարյալ կյանքից:

Վախը թերահավատության նշան է:

Ով որ խավարի մեջ է շրջում, նա չի կարող ճշմարտության լույսով առաջնորդվել:

Բոլոր առաքինություններից գլխավորը համբերությունն է և այլն....

3.Մանուկ Աբեղյանի դիպուկ բնութագրմամբ՝«Էպոսը ժողովրդի պատմական բանաստեղծությունն է, կամ բանաստեղծական պատմությունը»:

Մեր ժողովրդի «բանաստեղծական պատմության» արմատները գնում են վաղնջական ժամանակներ, բայց այն վերջնականապես ձևավորվել է 8-10-րդ դարերում և բազմաթիվ պատումներով տարածվել մեր աշխարհում:

Էպոսի մասի առաջին հիշատակությանը մենք հանդիպում ենք 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդներ Տեներեյրոյի և Աֆոնսոյի մոտ: Յայ բանահյուսության մեջ առաջին անգամ գրի է առել ևհրատարակել

բանահավաք Գարեգին Սրվանձոյանցը 1874-ին «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Մեկ ուրիշ տարբերակ 1889-ին գրի է առել և

հրատարակել Մանուկ Աբեղյանը «Դավիթ և Մհեր» վերնագրով: Յետագայում

գրի են առնվել շուրջ 160 պատումներ, որոնց մի մասը հրատարակված են: 1939-ին՝ վիպերգի ստեղծման 1000-ամյակի առիթով, 60 պատումների հիման վրա հրատարակվեց «Սասունցի Դավիթ» համահավաք տեքստը:

«Սասնա ծռեր» վիպերգն ունեցել է գրական բազմաթիվ մշակումներ: Այն մշակել են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Նաիրի Չարյանը, Եղիշե Չարենցը, Մկրտիչ Խերանյանը, Վիգեն Խեչումյանը, Սողոմոն Տարոնցին և այլք: Լավագույնը Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմն է:

4.Ֆրիկը 13-14-րդ դարերի բանաստեղծ է. նրա կենսագրական տեղեկությունները խիստ ժլատ են: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ նա եղել է որդին Թագվոշի և եղբորորդին Դոդոնայի: Ուրիշ փաստեր չկան. մնացածը քաղում ենք նրա բանաստեղծություններից: Ֆրիկ նշանակում է կրակի վրա այրված դեռահաս ցորեն. Այս անունը ևս բացահայտում է Ֆրիկի ապրած տառապագին կյանքը: Երբեմնի ունևոր մարդը թաթար- մոնղոլների արշավանքների ժամանակ զրկվում է ամեն ինչից. պարտքի դիմաց առևանգում են որդուն, և բանաստեղծը իր հետագա տարիները անցկացնում է դեգերումների ու փնտրտուքի մեջ՝ վիշտը խեղդելով գինու մեջ: Գրել է կրոնական, խրատական տաղեր, վերապատմել Աստվածաշնչի որոշ դրվագներ: Սակայն գրականության պատմության մեջ նա մնացել է իր կատարած մեծագույն նորարությամբ. Կոնստանտին Երզնկացու հետ նա մեր գրականության մեջ սկզբնավորում է անձնական բանաստեղծությունը: Նա առաջինն է բանաստեղծորեն մշակել ժողովրդական առակները՝ դրանցով դաստիարակելով ժամանակակիցներին և հետագա սերունդներին՝ չտրվել ընչասիրության, չսպանել մերձավորին, ապրել քրիստոնեաբար:

Ֆրիկն առաջիններից էր, որ քննադատեց սոցիալական անհավասարությունը՝ հիմք դնելով սոցիալական բանաստեղծությանը, որի լավագույն արտահայտությունն է «Գանգատ» («Բան ի Ֆրիկ գրքոյն») բանաստեղծությունը: «Արդար և իրավ» կոչված Արարիչը անհավասար է բաշխում մարդկանց ոչ միայն ունեցվածքը, այլև կյանքը՝ ՄԷկն կապրի տասն տարի, մյուսն հարևուր և աւելի:

«Գանգատը» Ֆրիկի բողոքն է Աստծո դեմ, բայց նա չի դառնում հավատախաբ, այլ իր խոր վրդովմունքն է հայտնում Աստծո ստեղծած աշխարհի դրվածքի հանդեպ: Նա դառնում է մարդու իրավունքների պաշտպան. Արդար ու ազնիվ է նրա խոսքը նաև մեր օրերում:

ՄԷկն ի պապանց պարոնորդի , ՄԷկն ի հարանց մուրող լինի,

ՄԷկին հազար ձի ու ջորի, ՄԷկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի:

ՄԷկին հազար կապիճ ոսկի, ՄԷկին ո՛չ փող մի պղղնձի...

ՄԷկին հարամս յաջողի, ՄԷկին հալալն կորընչի....

Բնականաբար արդիական է այս բանաստեղծությունը, քանի որ այժմ էլ մեր շուրջը կան հանիրավի իրավազրկված, թալանված, գործազուրկ մարդիկ, որոնց գոյությունը զարգացած ու մարդասեր, ժողովրդավար հասարակության ամոթն է:

5.1914 թվականի մայիսին Ամենայն հայոց բանաստեղծի և մեծ բնակարիչ  
Գևորգ Բ աշինջադյանի ջանքերով Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում  
կանգնեցվում է Սայաթ-Նովայի մահարձանը: Մինչ այդ Հովհաննես  
Թումանյանը կոչով դիմել էր հայ և վրաց  
ժողովուրդներին՝ հանգանականություն կազմակերպելու հորդորով:  
Ժողովրդի հանգանակությամբ իրականություն դարձավ հանճարեղ աշուղ-  
բանաստեղծին իր սիրած «խալխին» վերադարձնելու նվիրական  
գաղափարը: 1914-ի մայիսից մինչ օրս կատարվում է սայաթնովյան  
Վարդատուն. Երախտապարտ ժողովուրդը կարմիր վարդերով է ծածկում  
պաշտելի երգչի գերեզմանը: Հենց 1914-ին էլ Թումանյանը կարդում է այդ  
առիթով գրած իր բանաստեղծությունը՝

Երգով եկավ, վերքով գնաց Սայաթ- Նովան,  
Ախով եկավ, վախով գնաց Սայաթ-Նովան,  
Սիրով եկավ, սրով գնաց Սայաթ- Նովան,  
Սիրով մնաց Սայաթ- Նովան:

Հերակլ արքային նվիրված «Դուն են գլխեն» տաղում Սայաթ- Նովան տալիս է  
իր և իր գործի անմահության ճշմարտ գնահատականը.

Ամեն մարդ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրի՛շ ջըրեն է,  
Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրըն ուրի՛շ գըրեն է:

Իսկ սերունդներին նա կտակել է՝ Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե:

Սայաթ- Նովան իրեն համարել է «խալխի նոքար»: Պարույր Սևակը իր  
«Սայաթ- Նովա» մենագրության մեջ նրան անվանել է Մեծ բեզարածև Մեծ  
ըղձավոր: Շիրազը նրան անվանել է Կովկասի յար, իսկ Չարենցը հղում  
անելով հենց իրեն՝ մեծ երգչին, նրան անվանել է խալխի շռայլ նոքար: